ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2026 թվականի N 0455-Ա

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Նարինե Դավթի Կարապետյանի դիմումը իրեն և իր ընտանիքի անդամներին ընդհանուր հանատեղ սեփականության իրավունքով պատկանող, 0.1հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատումից հասարակական կառուցապատման հողամասի փոխելու վերաբերյալ, ինչպես նաև հաշվի առնելով. որ նշված փոփոխությունը կատարելը չի հանգեցնում գլխավոր հատակագծի հիմնական նախագծային լուծումների փոփոխությունների, չի փոփոխվում գլխավոր հատակագծով սահմանված կառուցապատման հերթականությունը, հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբեկտների (գոտիների) տարածքներում, չի նախատեսված բարձր և բարձրագույն ռիսկայնության և պետական բյուջեի միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ օբեկտերի կառուցման համար. **որոշում եմ.**

1.Արարատ համայնքի Ավշար բնակավայրի Ֆիդայու փողոց 13 հասցեի, 03-013-0091-0007 կադաստրային ծածկագիրը կրող, քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 0.1 հա բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակելի կառուցապատման հողամասից հասարակական կառուցապատման հողամասի:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

29 ապրիլի 2026 թ.
ք. Արարատ